ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ և ԾՐԱԳՐԵՐ

Բնության պահպանության միջազգային միություն (IUCN): Զբաղվում է երկիր մոլորակի կենսաբազմազանության պահպանման խնդիրների լուսաբանմամբ: Հիմնադրվել է 1948 թվականին:

Նպատակն է աշխարհի բոլոր կազմակերպություններին տրամադրել աջակցություն և օգնություն՝ պահպանելու բնության ամբողջականությունն ու բազմազանությունը, բնական պաշարների բանական և էկոլոգիապես կայուն օգտագործման ապահովումը: Հիմնական գործունեության ոլորտներն են՝ բնապահպանական մոնիթորինգի իրականացումը, բնության պահպանության պահանջների, գործողությունների ծրագրերի մշակման, բնապահպանական ոչ կառավարական կազմակերպություններին աջակցությունը, տեղեկատվության տարածումը, խորհրդատվության տրամադրումը և այլն: Գլխավորում է Միջազգային Կարմիր և Կանաչ գրքերի կազմման ու հրատարակման աշխատանքները:

Գլոբալ էկոլոգիական հիմնադրամ (GEF): Հիմնական գործունեությունն է ջերմոցային գազերի արտանետումների կրճատման, կենսաբազմազանության պահպանության, միջազգային ջրերի և օզոնային շերտի պահպանության ծրագրերին ֆինանսական և տեխնիկական աջակցությունը:

Իր գոյության ընթացքում Greenpeace–ը մի խումբ կամավոր բնապահպաններից վերածվել է հզոր միջազգային էկոլոգիական կազմակերպության, որն ակտիվ է ամբողջ աշխարհում: Կազմակերպության հսկողության տիրույթում են երկրագնդի կենսաբազմազանությունը և մթնոլորտի պաշտպանությունը, պայքար միջուկային պայթեցումների, թունաքիմիկատների կիրառման դեմ: Greenpeace–ն իր գործունեության մեջ առաջնորդվում է հետևյալ սկզբունքներով. բողոքի ակցիաների կազմակերպում և անցկացում, հասարակության ուշադրությունը խնդրի շուրջը գրավելու նպատակով: Greenpeace–ը չի փոխկապակցված որևէ քաղաքական կուսակցության հետ, չի ընդունում նվիրատվություններ պետական կազմակերպություններից, առևտրային կառույցներից և քաղաքական կուսակցություններից: Կազմակերպությունը և նրա մասնաճյուղերը ֆինանսավորվում են բացառապես ամբողջ աշխարհում շարժման աջակիցների անձնական կամավոր նվիրատվություններից: Հիմնական ղեկավար մարմինը Greenpeace–ի խորհուրդն է,

որը բաղկացած է աշխարհի տարբեր երկրներում առկա կազմակերպության բոլոր 40 գրասենյակների ներկայացուցիչներից:

ՄԱԿ-ի կրթության, գիտության և մշակույթի կազմակերպություն: Նպատակն է նպաստել խաղաղության և անվտանգության պահպանմանը՝ զարկ տալով միջազգային համագործակցությանը կրթության, գիտության և մշակույթի բնագավառներում բարեփոխումների իրականացման միջոցով: Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրությամբ հռչակված հիմնարար ազատությունների հետ մեկտեղ նպատակ ունի մեծացնել համընդհանուր հարգանքը արդարության, օրենքի ուժի, մարդու իրավունքների նկատմամբ ՅՈՒՆԵՍԿՕ-ն ձգտում է իրականացնել իր նպատակները հինգ մեծ ծրագրերի միջոցով՝ կրթություն, բնական գիտություններ, սոցիալական գիտություններ, մշակույթ և հաղորդակցություն/տեղեկատվություն:

ՄԱԿ-ի համաշխարհային պարենի և գյուղատնտեսության կազմակերպություն (FAO): Հիմնադրվել է 1945 թվականին: Նպատակն է պարենի մատակարարման բարելավումը և երկրագնդի բնակչության կենսամակարդակի ցուցանիշների, գյուղատնտեսական մթերքների արտադրության արդյունավետության և գյուղական բնակչության կենսապայմանների բարելավումը: Հիմնական գործունեությունը ծավալում է սննդի որակի, գյուղատնտեսական, անտառտնտեսվարման, օվկիանոսի կենսաբանական պաշարների պահպանության և արդյունավետ օգտագործման, ինչպես նաև վիճակագրական ուսումնասիրությունների նախապատրաստման, տեխնիկական աջակցության, ներդրումային գործունեության տեղեկատվության հավաքի, վերլուծության և տարածման ոլորտում: Մեծ ուշադրություն է հատկացնում գյուղատնտեսական մթերքների մարկետինգին, Կայուն Զարգացմանը:

ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագիր (UNEP): Ծրագրի հիմնական նպատակը շրջակա միջավայրի պահպանությանն ու բարելավմանն ուղղված միջոցառումների իրականացումն է՝ ի բարօրություն ներկա և հաջորդ սերունդների: Ծրագրի նշանաբանն է. «Շրջակա միջավայրը զարգացման հետաքրքրություններում: Ծրագիրը ունի վեց խոշոր տարածաշրջանային կենտրոններ, ինչպես նաև գրասենյակներ բազմաթիվ երկրներում և պատասխանատու է գլոբալ, տարածաշրջանային մակարդակներով էկոլոգիական խնդիրների լուծման համար: Ծրագիրը նշանակալի դեր ունի էկոլոգիային և շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված միջազգային կոնվենցիների զարգացման գործում, համագործակցում է տարբեր երկրների կառավարությունների և ոչ կառավարական միջազգային կազմակերպությունների հետ: UNEP-ը հաճախ ֆինանսավորում է էկոլոգիական տարբեր ծրագրեր և նպաստում դրանց իրականացմանը:

Վայրի բնության համաշխարհային հիմնադրամ (WWF): Ունի մոտ 5 միլիոն մշտական հովանավոր և ազգային ընկերակցություններ: Հիմնադրամի նպատակն է բնական միջավայրի վատթարացման կանխարգելումը, բնության պահպանության և բուսական ու կենդանական աշխարհի անհետացող տեսակների փրկության համար ֆինանսական միջոցների հայթայթումը: Հիմնական գործունեությունն է գենետիկական, տեսակային և էկոհամակարգային բազմազանության պահպանումը, վերականգնվող բնական պաշարների օգտագործման կայուն ձևերի ապահովումը, աղտոտման նվազեցման և էներգիայի ու պաշարների արդյունավետ օգտագործման նպաստումը, բնապահպանական հիմնախնդիրների լուծման ռազմավարության մշակումը:

Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագիր (UNDP): Ծրագիրը խթանում է պետությունների միջև տեխնիկական և ներդրումային համագործակցությունը, սատարում փվյալ ոլորտում համաշխարհային փոփոխությունների իրականացմանը և փորձում նպաստել երկրների համար գիտելիքների, փորձի և պաշարների համաօգտագործմանը՝ բնակչությանն օգնելու առավել լավ կենսամիջոցային պայմաններ ստեղծելու գործում: Ծրագիրը իր հիմնական գործունեությունը իրականացնում է զարգացող երկրներում՝ փորձագիտական խորհրդատվության, վերապատրաստման և դրամաշնորհների տրամադրման ձևով: